ա Ա

# ԱՔԼՈՐՆ ԱՍԱՑ



Աքլորն ասաց աքլորին.
- Արի կանչենք բոլորին,
Սագին,
Բադին,
Արորին,
Կաչաղակին ու լորին,
Տեսնենք, թե ո՞վ մեզնից լավ
ԾՈՒՂՐՈՒՂՈՒՆ կսովորի:



ա
Ա

# ԲՈՒՆ

Բ բ

Ձու է դնում բնում բուն,
Ճուտ է հանում բնում բուն,
Պատսպարվում չար աչքից,
Թաքնվում է բնում բուն:
Քուն մտնում օր ցերեկով՝
Գիշերներն է բանում բուն:



# գ Գ



## ԳՆԴԱԿԸ

Գնդակ ունենք մի կլորիկ՝
Կանաչ, կապույտ,
կարմրափորիկ,
Ինչքան էլ որ ծեծենք, մեկ է,
Խաղընկերն է մեր բոլորի:

# Ղ ղ ԴՈՂԴՈՂԱՑՈՂ ՇԼԴՈՆ

Դողդողում է թուփը կանաչ
Ու կակազում՝ դո-դո-դո...
Բանից պարզվեց, որ թփի տակ
Թաքնվել է մի շլդո:

Երբ հարցրին, թե ո՞վ է քեզ
Ահ ներշնչել, ա՛յ շլդո,
Նա կմկմաց՝ ոչ ոքից էլ
Ես ահ չունեմ՝ դո-դո-դո...





# Ե ե

## ԵՐԱՆԻ

Ա՜խ, երանի՜, երանի՜
Այն երջանիկ բերանին,
Որ նոր պիտի իմանա
Համը հայոց ծիրանի





զ Զ

# ԲԶԵԶԸ

Բզեզը բուրդ է գզում,
Բզեզը բուրդ է գզում,
Բուրդ է գզում ու տզզում.
- Գիտե՞ք, թե ինչ եմ ուզում.

Բրդե սարեր եմ ուզում,
Բրդե ծորեր եմ ուզում,
Ձագուկներիս տզտզան
Բրդե շորեր եմ ուզում:



Զ զ